

ՀԱՅԱՔԻՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

PASDERMADJIAN H. *Histoire de l'Arménie depuis les origines Jusqu'au traité de Lausanne*. Deuxième édition revue. Paris, Librairie Orientale H. Samuelian, 1964, p. 437, 1 carte.

Ժնեի համալսարանի պրոֆեսոր Հրանդ Պաս-
տերմաճյանի 1949 թ. լույս տեսած «Հայաստա-
նի պատմությունը» աշխատության երկրորդ, վե-
րամշակված հրատարակությունն է, որը հեղի-
նակի մահից (1954) տաս տարի հետո լույս է
տեսել Փարիզում՝ Հրանդ Սամվելյանի «Արևել-
յան գրատան» հրատարակությամբ: Առաջին
հրատարակությունից հետո նոր հետազոտու-
թյունների լույսի տակ հեղինակի կատարած բազ-
մաթիվ գրառումները հավաքել, դասավորել և
այս հրատարակությունը դրանցով հարստացրել
է Վահե Սեթյանը: Գրքի վերջում զետեղված է
Հայաստանի բարտեչը, որ գծագրված է Ռաֆա-
յել Շիշմանյանի կողմից:

Գիրքը բաղկացած է ներածությունից և հետև-
յալ 19 գլուխներից. — երկիրը և նրա բնակչու-
թյունը (էջ 11—24), անկախության նվաճումը
(էջ 25—34), Տիգրան Մեծը (էջ 35—65), Հա-
յաստանի թագավորությունը Հռոմի և Պարթև-
ների միջև (էջ 66—94), քրիստոնեության ըն-
դունումը (էջ 95—117), քրիստոնեության պաշտ-
պանությունը (էջ 118—148), Բագրատունիների
հայկական թագավորությունը (էջ 149—179),
Հայաստանը և Բյուզանդիան (էջ 180—196), նոր
Հայաստանի թագավորությունը (էջ 197—235),
Հայաստանը թուրանական տիրապետության տակ
(էջ 236—258), հայկական վերածնունդը (էջ
259—288), արևելյան հարցը (էջ 289—304),
Ռուսաստանը Անդրկովկասում (էջ 305—318),
հայկական հարցը (էջ 319—371), պայքար եր-
կու ճակատում (էջ 372—379), ցարական Ռու-

սաստանը հայերի դեմ (էջ 380—394), երիտ-
թուրքական հեղափոխությունը և հայ ժողովուր-
դը առաջին համաշխարհային պատերազմի նա-
խօրեին (էջ 395—406), առաջին համաշխարհա-
յին պատերազմը (էջ 407—415), Հայաստանի
վերածնունդը (էջ 416—431):

Ներածականում հեղինակը նշում է այն կարե-
վոր դերը, որ կատարել է հայ ժողովուրդը երկու
ցամաքների միջև հարաբերությունների զար-
գացման, գաղափարների խաչաձևման և քա-
ղաքակրթությունների մշակման ասպարեզում:
«Այդ դերը խաղացել է Հայաստանը անտիկ շրջ-
անում՝ Հռոմի և Պարթևների միջև, այն շարու-
նակել է միջին դարերում՝ Բյուզանդիայի և արա-
բական կայսրության միջև, այնուհետև նոր ժա-
մանակներում՝ Եվրոպայի և մահմեդական արևել-
քի միջև», — գրում է հեղինակը և ընդգծում այն
հանգամանքը, որ հայ ժողովրդի պատմությունը
«էրտորեն կապված է մեծ կայսրությունների
պատմության հետ, որոնք հաջորդաբար իշխել
են Արևելքում»:

Ի տարբերություն հայ ժողովրդի պատմության
վերաբերյալ օտար լեզուներով լույս տեսած մյուս
հրատարակությունների, որոնցում ընդգրկված է
միայն հին ու միջնադարյան Հայաստանը և շատ
քիչ տեղ է հատկացված նոր ժամանակների
պատմությանը, այս աշխատության մեջ հեղի-
նակը մեծ տեղ է տրամադրել նաև նոր ու ժա-
մանակակից շրջաններին, օգտագործելով հայ և
օտարադղի բազմաթիվ գիտնականների աշխա-
տությունները:

ՊՈՅԱՆՅԱՆ ՏԻԴՐԱՆ Հ. Հայկական լեզուներ: Պատմական հուշագրություն:
Ուոքերաուն, տպարան «Պայֆաի», 1965, 415 էջ, նկարազարդ:

Հայ ազատագրական պայքարի պատմության
ամենից քիչ լուսաբանված դրվագներն են նկա-
րագրված հայկական լեզուական շարժման մաս-
նակից Տիգրան Պոյաճյանի գրքում: Իր աշխա-

տությունը պատմական, հուշագրական և վավե-
րական հարուստ փաստերով հագեցնելու նպա-
տակով հեղինակը դիմել է «ուր որ հնարավոր-
էր գտնելու թղթածրարներ, նամակներ, արձա-

նագրություններ և գրքեր, որոնք Կիլիկիո կամավորական շարժման այս կամ այն երևույթին վրա լույս կրնային սփռել: Նա օգտվել է Փարիզի Նուպարյան Մատենադարանից, կամավորական շարժման վերաբերյալ մինչ այդ լույս տեսած հորելյանական հրատարակություններից, հայերեն և օտար լեզուներով բաղմամբիվ մենագրական աշխատություններից, լեզունականների հուշերից, սփյուռքահայ պարբերական մամուլի էջերից:

ՏԵՐ-ՍԱՐԳՍՅԱՆ ՏԵՎԿԱՆՑ ՄԻՍԱԿ, Երգեր ու խոհեր, Նուր Ջուղա — Շիրազ—Թեհրան, տպարան «Ալիֆ», 1965, 145 էջ, նկարազարդ:

Հետևելով Կ. Պոլսում 1870—80-ական թթ. ստեղծված միությունների և ընկերությունների օրինակին, վանեցի Միսակ Տեկանցը (Տեր-Սարգսյան), իր շուրջը հավաքելով իր տարեկից ընկերներին, հիմնում է Մամիկոնյան և Սանուց Ուսումնասիրաց ընկերություններ, որոնք հետապնդում էին ազգային կրթություն և ուսում տարածելու նպատակ, կազմում են նույնիսկ թատերասիրաց մի խումբ: Սակայն այդ ընկերությունների ժողովներն ու ձեռնարկները բացահայտվում են Վանի թուրք կառավարության լրրտեսների միջոցով և ենթարկվում հետապնդման: Միսակ Տեկանցն ստիպված 1881 թ. անցնում է Վանա լճի արևմտյան կողմում գտնվող Դատվան գյուղը և ուսուցչությամբ զբաղվում: 1883 թ. տեղափոխվում է Բերկրի գավառի Գյուղակ և Գործոթ գյուղերը և յոթ տարի շարունակ զբաղվում է գեղջուկ մանուկների դաստիարակության գործով: 1889 թ. ձերբակալվում է թուրք ոստիկանության կողմից: Բանտարկությունից մի տարի կան առաջների ու հանելուկների ժողովածուն:

Գիրքը բաղկացած է 22 գլուխներից, որոնցում համադրված են պաշտոնական վկայություններ, հարյուրավոր լուսանկարներ ու փաստաթղթեր: Պոյաճյանը լինելով կամավորական շարժման մասնակից, մանրամասն նկարագրում է լեզունական շարժման ամբողջ պատմությունը՝ սկսած նրա ծագումից, խմբերի կազմավորումից ու մարզումներից, մինչև զորացումը:

Հետո՝ վատառողջ վիճակում, նա անցնում է Շատախ գավառի Բաղ գյուղաքաղաքը, որտեղ և մահանում է 1906 թ.:

Ընթանալով գաղափարաբանության և ընթերցանությամբ գիտելիքներ ձեռք բերած գյուղական ուսուցչի գրական երկերն են, որ ամփոփվել են այս գրքում: Նրանում տեղ գտած բարոյական, խրատական, ազգագրական, ժողովրդական և բարբառային հին ոտանավորները դասավորել, պատկերազարդել և խմբագրել է Հայկ Աճեմյանը: Գրքի սկզբում տոհմագրական ընդարձակ տեղեկություններ կան Տեկանց Տեր-Սարգսյան գերդաստանի անդամների մասին:

Գրքի նյութերը հետաքրքիր են մասնավորապես ազգագրական և գավառա-բարբառագիտական տեսակետից: Գրքի հեղինակն ունի նաև 16 անտիպ գրվածքներ, որոնցից արժեքավոր են գավառաբարբառների բառարանը և ժողովրդական

«ՈՒՍԱՆՈՂ», Ավիրված Սահակյան Լիսեի 40-ամյակին (1923—1963): Բեյրութ, տպ. Տոնիկյան, 1965, 276 էջ, նկարազարդ:

Լույս է տեսել Բեյրութի Սահակյան Լիսեի քառասնամյա հորելյանի առթիվ, Սահակյան շրջանավարտից միության և դպրոցի «Ուսանող» պաշտոնաթերթի նախաձեռնությամբ: Հատորն ընդգրկում է Սահակյան վարժարանի 1949—1964 թթ. ժամանակաշրջանը: Վարժարանի սանհինգամյակի առթիվ լույս տեսած Հուշագրքի հետ միասին այն ընթերցողին ներկայացնում է դպրոցի քառասնամյա գործունեությունը: Ժողովածուն ունի պատմական և գրական բովանդակ: Գիրքն սկսվում է վարժարանի համառոտ պատմությամբ և օրագրական ամփոփ տեղեկություններով: Հաստատվում մանրամասն տե-

ղեկություններ կան նաև վարժարանի օժանդակ մարմինների՝ հոգաբարձության, մայրերի միության, շրջանավարտից միության և այլ կազմակերպությունների, ինչպես նաև կրթական այդ օջախի բարերարների մասին, որոնք նպաստել են սփյուռքահայ կրթական այդ հաստատության գործունեությանը:

Գրքում բաղմամբիվ տեղեկություններ կան Սահակյան դպրոցի շրջանավարտների մասին, տղվալներ՝ ուսուցչական կազմի վերաբերյալ: Գրքի հուշերի և գրական բաժնում (էջ 211—270) հանդես են եկել դպրոցի դաստիարակները և շրջանավարտները:

ԳՐԻԳՈՐ ՎՐԴ. ՊԵՏՐՈՎԻՉ, Ստեփանոս Ե. Սալմաստեցի Կաթողիկոս Էջմիածնի (1543—1552), ՎԵՆԵՏԻԿ, Ս. Ղազար, 1964, 110 էջ:

XVI դարի հայ-եվրոպական հարաբերությունների պատմության մեջ եվրոպայի կրոնական ու քաղաքական բարդ կացության շրջանում ուրույն դեր է կատարել Ստեփանոս Ե. Սալմաստեցին: Այս գիրքը որոշ մանրամասնություններով լուսաբանում է համեմատաբար քիչ պարզաբանված այդ պատմական ժամանակաշրջանը:

Գիրքը բաղկացած է երեք գլուխներից: Առաջին գլուխը վերնագրված է «Ստեփանոս Ե. Կաթողիկոս Իտալիո մեջ» (էջ 10—30): Այստեղ հեղինակը համառոտակի նկարագրում է պատմական այն ժամանակաշրջանը, երբ Բագրատունյաց հարստությունն անկում էր ապրում և ցույց է տալիս, թե ինչ գործունեություն է ծավալել Ստեփանոս Սալմաստեցին հայ ժողովրդի վիճակը բարելավելու նպատակով: 1548 թ. նա հասնում է Վենետիկ, իսկ հաջորդ տարվա գարնանը անցնում Հռոմ: Գրքի այս գլխում բաղմաթիվ վկայություններ և վավերաթղթեր են մեջ բերված, որոնք վկայում են Ստեփանոսի բանակցությունները Իտալիայում՝ հանուն հայկական ժողովրդի արդարացի լուծման:

Երկրորդ գլուխը կրում է «Ստեփանոս Ե. Կաթողիկոս Հնաստանի մեջ» վերնագիրը (էջ 31—48): Այս գլխում ևս հեղինակը քննության նյութ է դարձնում որոշ պատմագիրների ենթադրությունները և վավերագրերի հիման վրա փորձում է լուսաբանել հայ ժողովրդի պատմության XVI դարի կիսերի ազատագրական ձգտումները: Այնուհետև խոսվում է Ստեփանոս Սալմաստեցու կեղծությունում գտնվելու, հայկական դատի խնդրով հատկապես Հնաստան գնալու և Սիգիզմունդ Ի Օգոստոս թագավորի հետ նրա տեսակցության մասին:

Գրքի երրորդ գլխում (էջ 49—106) քննության է առնված Ստեփանոս Սալմաստեցու մահվան պարագաների և թվականի հարցը: Վերջին էջերում ամփոփված են հեղինակի եզրակացությունները:

Հեղինակը այս ուսումնասիրությունը գրելիս օգտվել է հայերեն և օտարալեզու աղբյուրների 100 աշխատություններից: Նորություններ են դիտարկված փաստաթղթերի հրապարակումը և լատիներեն ու լեհերեն պատմական նյութերի ուսումնասիրությունը:

سایات نواف، قصائد، بیروت، ۱۳۷۵.

ՍԱՅԱԹ-ՆՈՎԱ, Տաղեր: Բեյրութ, 1965: 98 էջ:

Սայաթ-Նովայի ծննդյան 250-ամյակի առթիվ Քեյրութի հայկական «Գրական շրջանակ»-ը արար ընթերցողին ներկայացրել է բանաստեղծի հատերնտիրը արաբերեն լեզվով: Գրքի ներածականը (էջ 5—10) գրել է բանաստեղծ Սաիդ Աբդուլ Գիրբը բաղկացած է երկու մասերից: Առաջին մասում զետեղված են Սայաթ-Նովայի տաղերը: Սկզբում տեղ են գտել հայերեն տաղերը (էջ 13—38), այնուհետև՝ վրացերեն (էջ 39—52), իսկ վերջում՝ ադրբեջաներեն տաղերը (էջ 53—66):

Հատերնտիրի արաբերեն թարգմանության օգտաշատ աշխատանքին իրենց մասնակցություն են բերել գրագետ Ռաիֆ Խուրին, բանաստեղծ ղոկտոր Միշել Սուլեյմանը և սփյուռքահայ գրող Արմեն Դարյանը: Թարգմանությունների հետ միասին գրքի այս մասում տպագրված են նաև հայերեն, վրացերեն և ադրբեջաներեն մի քանի տաղեր:

Գրքի 67-րդ և 68-րդ էջերում զետեղված են Վալերի Բոյուսովի և Հովհաննես Թումանյանի խոսքերը Սայաթ-Նովայի մասին:

Գրքի երկրորդ մասը (էջ 69—96) կազմում է Սայաթ-Նովայի կյանքի ու գործունեության մասին Մ. Հասրաթյանի գրած ուսումնասիրության արաբերեն թարգմանությունը:

Հրատարակությունն առանձնապես աչքի է ընկնում իր շքեղությամբ, ճաշակով ու նուրբ ձևավորմամբ: Բացի տիտղոսաթերթից ու ներածականից, գրքի մնացած էջերը տպագրված են երկնագույն կապույտ ֆոնի վրա և բոլոր էջերը երիզված են սպիտակ նուրբ նկարազարդերով: Գրքի գեղարվեստական ձևավորման համար օգտագործված են Սայաթ-Նովայի հանրահայտ դիմանկարը (որի հեղինակն է նկարիչ Հ. Ռուխկյանը), Հակոբ Կոչոյանի նկարազարդումները և այլ նկարներ:

VITEJII DIN SASUN. *Epopee Populara Armeana*. In Romaneste de Nicolae Telca. Bucuresti, Editura Pentru Literatura Universală, 1965, p. 375.

Սասունցի Դավիթ ժողովրդական էպոսի ումիններեն առաջին հրատարակությունն է: Բարգմանությունը կատարված է 1958 թ. Մոսկվայի ուսերեն հրատարակությունից: Հայկական ժողովրդական դուցազներգության թարգմանիչն է Նիկոլան Քեյկան:

Ալեքսանդրա Բարկաչիլան գրել է գրքի ներածականը, որտեղ տեղեկություններ են տրվում հայ ժողովրդի բազմադարյան մշակույթի ու պատմության մասին: Բարկաչիլան հատկապես կանգ է առնում հայերեն այբուբենի ստեղծման վրա, որի շնորհիվ հնարավոր դարձավ գրի առնել հայ պատմագիրների ու փիլիսոփաների երկերը: Ներածականում մանրամասնորեն խոսվում է նաև «Սասունցի Դավիթ» դուցազներգության

ստեղծման ժամանակաշրջանի, պատմական միջադեպերի, էպոսի հերոսների և նրանց ծագման մասին:

Գրքում գետնդրված են Սասունցի Դավիթ չորս ճյուղերը՝ Սանասար և Բաղդուսար, Մեծ Մհեր, Սասունցի Դավիթ և Փոքր Մհեր: Գրքի 365—368 էջերը նվիրված են ծանոթություններին, ուր տրվում են գրքում ընդգրկված հատուկ անունների և որոշ բառերի բացատրությունները: Գիրքը գեղարվեստորեն նկարագարող է Անամարի Սմիչելսկին, որը և հանդիսանում է գրքի կազմի նկարի հեղինակը: Գրքի ումիններեն հրատարակությունը մեծ ավանդ է հայ-ումինական դրական կապերի պատմության բնագավառում:

MÉCÉRIAN JEAN, *Le génocide du peuple arménien*. Le sort de la population arménienne de l'empire ottoman. Beyrouth, Editions de l'Imprimerie Catholique, 1965, p. 127, 3 cartes.

Բեյրութի Սեն Ժոզեֆ համալսարանի Արևելյան դպրությանց ինստիտուտի պրոֆեսոր Հովհաննես Մարյանի հեղինակությամբ լույս տեսած վերջին գործերից մեկն է այս գիրքը, որը վերնագրված է «Հայ ժողովրդի ցեղասպանությունը» և լույս է տեսել 1915 թ. հայկական կոտորածների հիսնամյակի կապակցությամբ:

Գիրքը բաղկացած է 5 գլուխներից: Առաջինը կոչվում է «Օսմանյան Սահմանադրության հրաշակման հաջորդ օրը»: Հեղինակը հանգամանորեն բացահայտում է Արդուլ Համիդի՝ 1908 թ. ստորագրած հրամանը, որով ձեռնադրվեցին հուլիսյան հրաշակումը, որով ձեռնադրվեցին հուլիսյան հրաշակումը, որով ձեռնադրվեցին հուլիսյան հրաշակումը, որով ձեռնադրվեցին հուլիսյան հրաշակումը, որով ձեռնադրվեցին հուլիսյան հրաշակումը:

Երկրորդ գլուխը կրում է «Ցեղասպանության գործադրությունը» (էջ 47—76) խորագիրը: Այս գլխում հեղինակը հիմնականում աշխատել է պարզարանել հետևյալ հարցերը. 1) պատասխանատվություններ և փաստաթղթեր, 2) թուրքական կառավարության կողմից կիրառվող դա-

տաստանը, 3) ինչ էր կատարվում Հալեպից այն կողմ՝ անապատում:

Դաշնագրերի միջև ընկած ժամանակաշրջանում հայերի ճակատագրի մասին է պատմում Երրորդ գլուխը (էջ 77—86), որը եզրափակվում է Սովետական Հայաստանի վիթխարի վերելքի նկարագրությամբ:

Աշխատության չորրորդ գլուխը վերնագրված է «Հուլիսյան դաշնագրի հաջորդ օրը» (էջ 89—105): Այստեղ նկարագրված է Թուրքիայում, Լիբանանում և Սիրիայում ապրող հայերի դրությունը, որ մոտիկից ծանոթ է հեղինակին:

Գրքի վերջին գլխում համառոտակի խոսվում է Ալեքսանդրիտի սանձաքի հայ բնակչության վիճակի մասին (էջ 107—115): Այստեղ, առանձին ենթագլխում, տրված է Մուսա լեռան հերոսական դիմադրությունը:

Գրքում գետնդրված է 3 քարտեզ՝ հայկական ջարդերի և սեղահանությունների տեղագրական դրվագներ քարտեզը, Հայկական ՍՍՌ-ի քարտեզը և Մուսա լեռան քարտեզը՝ իր շրջակա հայկական գյուղերով ու կովիների վայրերի նշումներով:

Հ. ՄԵՔԵՐՅԱՆ

Revue des Etudes Arméniennes. Nouvelle série, tome I.

(Հայագիտական հանդես, նոր շարք, հատոր Ա), 496 էջ, Փարիզ, 1964. Խրատարակություն Գալուստ Կյուպենկյան հաստատության, տպագրված է Լուվենում (Բելգիա): Խմբագրական կազմ՝ է. Բենվենիստ, Կլ. Կահեն, Մ. Կահար, Ս. Տեր-Ներսեսյան, Ժ. Դյումեզիլ, Ա. Դյուպոն-Սոմեր, Ֆ. Ֆեյդի, Ա. Գրաբար, Պ. Լրմերլ, Շ. Մերսիե, Ա. Միլամբել, Լ. Ռոբեր: Տնօրեն՝ է. Բենվենիստ, խմբագրության ֆարուղար՝ Հ. Պերպերյան:

Հայագետներին ծանոթ է հայագիտական այս արժեքավոր հանդեսի առաջին շարքը. 1920 թ. այն հիմնադրեցին անվանի հայագետներ Ա. Մեյլեն և Ֆ. Մակլերը, որպես իրենց իսկ կադմակերպած Հայագիտական ընկերության պաշտոնական պարբերականը: Այն լույս էր տեսնում գլխավորապես նվիրատվությունների շնորհիվ: Տասնմեկերորդ հատորից հետո (22 գիրք), 1933 թ., այն հարկադրվեց դադարել դրամի և ոչ թե տպագրելի նյութերի պակասի հետևանքով. սակայն հայագիտական գանձարանում այն մնաց որպես անգնահատելի ավանդ: Այժմ Հանդեսի ղեկավարությունը ստանձնել է Մեյլեի աշակերտ, ծանրակշիռ լեզվաբան է. Բենվենիստը, որն այսպիսով շարունակում է իր ուսուցչի ոչ միայն դասախոսական աշխատանքը, այլև հայագիտական գործունեությունը: Շատերիս հայտնի է, որ Հանդեսի այս առաջին ստվար հատորը և պատրաստվող հետագա հատորները շատ բանով պարտական են հայագետ, եռանդուն բանասեր Հայկ Պերպերյանին:

Պատահական չէ, որ Հանդեսը վերսկսեց, ավելի ճիշտ՝ շարունակում է հրատարակվել Ֆրանսիայում: Այս երկիրը նվրոպայում եղել է հայագիտության վաղ և կարևորագույն կենտրոններից մեկը: Շահան Զրպետի համառ ջանքերի շնորհիվ այնտեղ հաստատվեց հայոց լեզվի և հայագիտության եվրոպական առաջին ամբիոնը (1811 թ., Արևելյան կենդանի լեզուների բարձրագույն դպրոցում), որը գոյություն ունի մինչև օրս՝ հայագետ Ֆ. Ֆեյդիի ղեկավարությամբ: Ֆրանսիան տվել է այնպիսի խոշոր հայագետներ, ինչպես՝ Լը Վալան դը Ֆլորիվալ, է. Դյուլորիե, Սեն-Մարտեն, Լանգլուա, Բրոսե, Կարիեր, Սեյլ, Մակլեր, Ն. Լ. Մարիես, Շ. Մերսիե և ուրիշներ:

Հանդեսի տնօրենը նախաբանում հայտարարում է, որ այս գիտական պարբերականը լայնորեն բաց է բոլոր երկրների գիտնականներին և հրապարակելու է հայագիտության բոլոր ճյուղերը, ինչպես նաև Հայաստանի և դրացի երկրների մշակութային հարաբերակցությունները լուսարանող գիտական հոդվածներ: Նշանակալից տեղ է հատկացվելու Հայաստանում լույս տեսնող հայագիտական աշխատանքների թարգմա-

նություններին, որոնք լեզվի պատճառով անհասանելի են մնում եվրոպական գիտնականներին: Հանդեսը ունենալու է նաև լրատու բաժին, մատենագիտական ցանկեր, որոշ հոդվածներ կուղեկցվեն նաև անհրաժեշտ լուսանկարներով:

Իր գծած այս ծրագրին հավատարիմ մնալով՝ Հանդեսն այս հատորում ընդգրկել է. հայ լեզվաբանության, բանասիրության, ձեռագրագիտության, փիլիսոփայության, ոսկերչության և արծաթագործության, մանրանկարչության, քաղաքական և եկեղեցական պատմության, բանահյուսության, ազգագրության, դրամագիտության հարցեր քննող ուսումնասիրություններ, որոնք ոչ միայն եվրոպացի, ամերիկացի հայ և օտար գիտնականների, այլև խորհրդային Հայաստանի և խորհրդային որոշ հանրապետությունների հայագետների գրչի արգասիքն են: Այսպես, Հայաստանի գիտնականներից հոդվածներ ունեն Հանդեսում՝ ակադեմիկոս Ա. Հովհաննիսյանը («Պետրոս դի Սարգիս Գիլանենց», Թարգմանված Արարատից, 1916 թ.), Մ. Բարթիկյանը («Հայ աղանդավորների հետքեր հյուսիսային Հունաստանում», Տեղեկագիր, 1956 թ.), Դ. Աբգարյանը («Դիտողություններ Սեոեոսի պատմության վերաբերյալ», Բանբեր Մատենադարանի, Դ., 1958 թ.), Ա. Տեր-Ղևոնդյանը («Դվինը Սալարիդների ժամանակ», Տեղեկագիր, 1956 թ.), Տ. Սահակյանը («Սյունիքի գյուղացիական ապստամբությունը Ժ դարում», Տեղեկագիր, 1956 թ.), Բ. Զուքասըզյանը («Իրանական վիպական ավանդությունների արձագանքները Գրիգոր Մագիստրոսի թղթերում», Проблемы восточковедения, 1960 թ.), հանգուցյալ Թ. Ավդալբեկյանը (հատված «Անհայտ աղանդավորներ հայոց մեջ» աշխատությունից, 1926 թ.), Լենինգրադից՝ Տ. Ա. Իզմաիլովան, Լվովից՝ Յա. Դաշկեիչը, Գրախոսվել են Հայաստանի գիտնականներ Հ. Մանանդյանի, Ս. Գ. Նարինյանի, Հ. Մ. Բարթիկյանի և այլոց աշխատանքները: Ինչպես նկատելի է, սովետահայ գիտնականների՝ Հանդեսում ֆրանսերեն թարգմանությամբ հրատարակված հոդվածները հայերեն կամ ռուսերեն լեզվով առաջին անգամ լույս են տեսել բավականին վաղ՝ 1956—1960 թթ. և փաստորեն վերահրատարակություններ են: Դա բացատրվում է

հավանաբար այն բանով, որ Հանդեսի խմբագրությունը ժամանակ չի ունեցել ձեռք բերելու հեղինակների անտիպ ուսումնասիրություններ:

Հանդեսում լույս տեսած հոդվածները ֆրանսերեն և անգլերեն լեզուներով են. նախաբանում ասված չէ, թե հոդվածները որ լեզվով պետք է շարադրվեն: Նշված չեն նաև Հանդեսի հատորների լույս ընծայման ժամկետները:

Համառոտակի ներկայացնենք Հանդեսի այս հատորի հոդվածները: Հասկանալի է, որ կանգ չենք առնի սովետահայ հայագետների հոդվածների վրա, քանի որ, ինչպես ասվեց, դրանք առաջին անգամ հայերեն կամ ռուսերեն լեզվով լույս են տեսել և դրանց քննարկած հարցերով հետաքրքրվողը կարող է դիմել բնագրին (հրատարակության տեղը նշված է ֆրանսերեն թարգմանության վերջում):

Հանդեսը բացվում է է. Բենվենիստի «Պարթևական տարրերը հայերենում» գիտական ընդարձակ հոդվածով (էջ 1—39): Թեև հեղինակի գրչին են պատկանում հայերենագիտական բազմաթիվ հոդվածներ թե՛ Հայագիտական Հանդեսի առաջին շարքում, թե՛ Փարիզի լեզվաբանական ընկերության տեղեկագրում (MSL) և այլուր, սակայն նա չի հավակնում իրեն հայագետ համարել: Հայագետներից բացի, նա իր աշխատություններով և հոդվածներով հայտնի է հնդեվրոպարանների և իրանագետների շրջանակում: Նա միշտ էլ զբաղվել է իրաներենի և հայերենի լեզվական տվյալների գիտական համեմատությամբ: Հայագիտական հանդեսի առաջին շարքում նա ուսումնասիրել է «Հայկական վիշապի ծագումը» (Զ., 7—9)՝ բանասիրական և լեզվաբանական տեսակետից, «Իրանական տիտղոսները հայերենում» (Թ., 5—10), «Հայերեն -ի վերջահանգ ուղղականները» (Ժ. 81—84) և «Հայերենի մերկ բառի -ի-ն» (Ժ, 187): Հայերենի իրանական կամ պարթևական փոխառություններին մեծ ուշադրություն է դարձրել նաև նրա ուսուցիչը՝ Ա. Մեյեն, որի հոդվածներից նշենք «Հայերենի կրած պարթևական ազդեցությունը» (REA, Ա., 9—12), «Պարթևական մի քանի բառեր հայերենում» (REA. Բ., 1—6) և այլն:

Պատմական գիտությունները ավելի ու ավելի են ապացուցում, որ պարթևական ազդեցությունը հայկական մշակույթի վրա մեծ է եղել, իսկ լեզվաբանական նորագույն հետազոտությունները շարունակում են հաստատել, որ հայերենի իրանական փոխառությունների մեծագույն մասը պարթևական է. մյուս կողմից՝ հայերենի փոխառությունները շատ օգտակար տեղեկություններ են ընձեռում և ընդլայնում մեր գիտելիքները իրանական բառապաշարի մասին: Հետևաբար է. Բենվենիստը հոդվածում իր հետազոտություն-

ները տանում է երկու գծով. հայերեն և պարթևական տվյալների հետեղական համեմատությամբ նա հաստատում է հայերեն մի շարք նոր բառերի փոխառական բնույթը և որոշում նրանց բարբառային ծագումը իրաներենում: Ուսումնասիրված հայերեն բառերի կիրառություններն ու իմաստները անհրաժեշտության դեպքում հեղինակը հավաստում է հայ հին մատենագրությունից բերված փաստերով՝ չրավականանալով բառարանների թարգմանություններով: Այս ճանապարհով հեղինակն ապացուցում է, որ ստուգաբանության տեսակետից Հյուրըմանի և Հ. Աճառյանի շարքական թողած կամ բնիկ հայերեն համարած բառերից շատերը, ինչպես օրինակ՝ ռաա թհասակ, տարիք, սաստ, երագ, աբագ, սամիկ, սուլաս և այլն, իրականում պարթևական փոխառություններ են: Մյուս կողմից՝ ժամանակին արված ստուգաբանական որոշ ենթադրություններ հավաստվում են նորագույն հետազոտություններով, որոնք այսպիսով բարձրացնում են Հյուրըմանի գիտական հոտառությունը: Որպես իրանական փոխառություն են ճանաչվում ոչ միայն առանձին, այլև մի ամբողջ շարք բառեր, որոնք իրենց հայերեն ձևում թաքուն ունեն իրանական մի նախամասնիկ. օրինակ՝ հայ. աւ=իրան. ab- ալգնել և նրանից ածանցված մյուս բառերում, նույնպես աւտաւ, աւծրտ, աւծանդաւ, աււլնւ և այլ բառերում, տաւ= նախածանցով հայերեն բառերը, ինչպես՝ տաւաշխաւհ, տաւաժամ և այլն նույնպես իրանական փոխառություններ են: Այդպիսին են նաև շատ ուրիշ բառեր, որոնց մանրամասն քննարկման համար հեղինակը հղում է ուրիշների և իր հետազոտություններին: Այնուհետև է. Բենվենիստը մանրամասն քննության է առնում հայերեն որոշ թվով բառեր՝ ապացուցելու համար, որ դրանք իրաներենից կատարված փոխառություններ են. դրանք են՝ աւլաւն, աշխաւ և աշխատ, բունդ, զուշակ, իւ, կար «կաթիւ», նկան և նկանակ (որոնց մասին երկար է խոսվում), նւլատակ, նուազ, սնդոյր, տաղնաւ (որի մասին նույնպես երկար է խոսվում), խուրան, ուխտ, վաւմ «որսորդական ցանց», զաւհաւէժ, զենուլ: Իր հոդվածի վերջում «Լեզվական պատճենումներ» ենթավերնագրի տակ հեղինակը, մեծ զգուշությամբ և խելացի վերապահությամբ, այն միտքն է արտահայտում, որ հայերենը իրաներենից փոխ է առել ոչ միայն առանձին բառեր, այլև դարձվածքներ, ինչպես այս անուն թոմն» զան ըմպել, որ հարաբերական դերանվան անհոլով կամ իզաֆետաձև կիրառությունը որոշ հազվագեղ պոեզիայում, բարդ բառեր, ինչպես՝ ակաւամոմ թմեղրամոմ», վաւղաղոյն, տիկարուն «տեգի կոթ»: Սակայն բարդ բառերի փոխառության հարցում հեղինակն զգուշությամբ այն միտքն է հայտ-

նում, որ ամեն դեպքում պետք է առանձին քննել և տեսնել, թե այդ բարդ բառերը որպես այդպիսի՝ են փոխ առնվել, թե կազմվել են հայերենում՝ իրանական բաղադրիչներով, ինչպես իրանական տիտղոսների անուններով և -պետ վերջամասնիկով հայերենում կազմվել են բարդ բառեր: Հեղինակը գտնում է, որ հայերենի բառապաշարի բազմաթիվ վերացական բառերի և արտակարգ զարգացումների նախատիպարը և նմուշը պետք է փնտրել ոչ միայն իրաներենում, այլև հունարենում. բազմաթիվ դեպքերում պետք է նկատի ունենալ հունական մի ազդեցություն, ինչպես՝ վիճակ, վիճակավոր, մեհենակապուտ, անանուն բառերի իմաստափոխության կամ կազմության դեպքում: Մի դիտողություն. հին հայերենում հոլովված բացահայտիչից առաջ ուղերանվան անհոլով կիրառության մասին խոսելիս է. Բենվենիստը կրկնում է Մեյեի բերած օրինակը՝ Եզնիկի «Եւ ընկղմեցաւ անուն աստուծոյ՝ որ տեառնն աւաւածոց՝ ի մէջ անուանց բազում աստուածոց» նախադասության ընդգրծված հատվածը, և վկայակոչում նրան: Ծիշտ է, Մեյեն 1899 թ. (Synt. comp., էջ 49, ծանոթ.) գրել է և 1906 թ. (MSL, հտ. 14, էջ 21) կրկնել, թե ու հարաբերականի այս տեսակ կիրառությունը իրանական ազդեցություն է, սակայն 1910 թ. (MSL, հտ. 15, էջ 346) նա ուղղելով իրեն՝ մերժում է իրանական որևէ ազդեցություն տվյալ խնդրում: Եվ իրոք, քննարկվող նախադասության մեջ ոչ մի անկանոնություն կամ իրանաբանություն չկա. կարծում ենք, որ նրանում ու հարաբերական դերանունը պետք է դրվի ուղղական հոլովով՝ անկախ տեառնն բառի հոլովից, և ենթական է է կամ է անուն զեղչված ստորոգյալի, այսինքն՝ Եւ ընկղմեցաւ անուն աստուծոյ՝ որ (է, կամ է անուն = ասյսինքն, հենց) տեառնն արարածոց...: «Շատ անգամ հարաբերականին (էական) բայը զորությունը կիմացվի» (Վ. Զալըխյան — Ա. Այտրնյան, Քերական. հայկ. լեզուի, 1885, էջ 348). Մեյեն նման նախադասությունները կոչում է բուն անվանական: Իդեպ, Եզնիկի թարգմանիչ Հ. Մարիեսը ճիշտ է հասկացել խնդրո առարկա հատվածը և թարգմանել . Et iut, du coup, submergé le nom de „Dieu“ — celui précisément du Seigneur des créatures—... (De Deo, 1959, էջ 663. ընդգծումը մերն է):

Հին հայերենի ուսումնասիրության տեսակետից հույժ հետաքրքրական է նաև Պ. Յունգմանի (Իոնն քաղաքից) հոդվածը՝ «Որոշիչ հոդի կիրառությունը գոյականի հետ դասական հայերենում» (էջ 47—99), որը նրա Inauguraldisseration-ն է, գրված 1963 թ. և ձևավոր Գերհարդ Դետերսի հիշատակին: Հոդվածագիրը որոշիչ է համարում ս, ո, և հոգերը, իսկ մի-ն՝ անո-

րոշ: Նա համաժամանակյա (սինխրոնիկ) մեթոդով ուսումնասիրում է հոգերի շարահյուսական կիրառությունը, վկայություններ քաղելով մեսրոպյան շրջանի երկու բնագրից՝ Եզնիկի Բ, ա—Բ, իր և Ղուկասի Ավետարանի Ա—Ժ գլուխներից: Նա ոչ թե ընտրում է իր դրույթները հավաստող օրինակները, այլ վերլուծում է գոյականի հետ հոդի կիրառության բոլոր դեպքերը այդ հատվածներում: Կանխավ ասենք, որ հոդվածագիրը համառոտակի նշում է աշխարհաբարի հոդի նորագոյացումները դասական հայերենի համեմատությամբ և խոստանում է հետագայում ներկայացնել արդի հայերենի հոդի ուսումնասիրությունը: Նախաբանում նշվում են ուսումնասիրության առարկան, մեթոդը, աղբյուրները, կիրառված տերմինաբանությունը, բառերի տառադարձությունը և գրությունը: Երկրորդ մասում ուսումնասիրվում են հայերենի հոդի ձևն ու իմաստները. վերջիններս սամանազատվում են հոդի շարահյուսական պաշտոնից, որը պատասխանում է այն հարցին, թե հոդը որ դեպքում է կիրառվում դասական հայերենում: Ի միջի այլոց, հեղինակը գտնում է, որ ս, դ, և հոգերի իմաստների մեջ բացահայտվում են պատկանելության թույլ հետքեր, որոնք գերիշխող դարձան աշխարհաբարում: Նրա այս միտքը, որ հավաստված է օրինակներով, մեզ առանձնապես ուրախացնում է, որովհետև տեսնում ենք, որ մենք նույն միտքը արտահայտելով «Հատկացուցիչ-հատկացյալ կապակցությունը գրաբարում» մեր անտիպ դիսերտացիայում (1960 թ.) չենք սխալվել՝ հակառակ դասական ուղի հայագետների կարծիքին: Հոդվածի երրորդ մասում, որ ամենակարևորն է, հեղինակը մանրամասն ուսումնասիրում է գոյականի հետ հոդի շարահյուսական գործածությունը՝ հոդի տեղը համադաս անդամների և փոխանուն սեռականի հետ, բացահայտիչ-բացահայտյալ, հատկացուցիչ-հատկացյալ, որոշիչ-որոշյալ կապակցություններում, հոգի կրկնությունը և այլն: Եզրակացություն. երբ մատենագիրը ենթադրում է, որ անձը կամ առարկան, որոնց մասին նա խոսում է, արդեն հայտնի են ընթերցողին, ապա նա դրանք կիրառում է որոշիչ հոգով, և Գ նախադրով, եթե դրանք ուղիղ խնդիր են: Հասկանալի է, որ մատենագիրը ընթերցողին ծանոթ պետք է համարի այն առարկան, որի մասին նա արդեն խոսել է, նույնիսկ եթե առաջին հիշատակումը կատարվել է հատուկ, իսկ հաջորդները հասարակ գոյականներով: Հոդվածի վերջին մասում հեղինակը աշխատում է բացահայտել այն բոլոր պայմանները, որոնց առկայության դեպքում մատենագիրը լիիրավ է այդպես մտածելու: Երկվում է, որ Պ. Յունգմանը ուսումնասիրել է ոչ միայն գրաբարի քերականներին, այլև նրան ծա-

նոթ են հայերենագիտական նորագույն ուսումնասիրությունները, ինչպես՝ Հ. Աճառյանի Հայոց լեզվի լիակատար քերականությունը, Հ. Կուսիկյանի «Հայ գրական լեզվի պատմական շարահյուսության ուրվագծեր» (1959 թ.), Յենսենի «Հին հայերենի քերականություն» (1959 թ.) և այլ աշխատություններ:

Հայ լեզվաբանության և բանասիրության համար հետաքրքրական է նաև Ռ. Հյուսենի (Վաշինգտոն) «Կովկասյան աղվանների այբուբենի մասին» հոդվածը (էջ 427—432), որ գրված է Մեսրոպ Մաշտոցի ծննդյան 1600-ամյակի առթիվ: Հոդվածագիրը անտեղի չի համարում վերանայել այն փոքր տեղեկությունները, որոնք հայտնի են աղվանական այբուբենի մասին, որ իլյա Աբուլաձեն 1937 թ. հայտնաբերել է Երևանի Մատենադարանի № 7117 հայերեն ձեռագրում: Հոդվածին ներդիր տրված է ձեռագրի այդ էջի լուսանկարը: Մեր կարծիքով հեղինակը չորս բան չի ավելացնում աղվանական այբուբենի համարվող այդ նշանագրերի ուսումնասիրությանը կամ վերծանմանը. նա ամփոփում է այդ ուղղությամբ Ա. Շանիձեի, Ժ. Դյումենիլի և ուրիշների աշխատանքը:

Վ. Թոմսոնը (Քեմբրիջ, Մասաչուսեթս) «Փիլիսոփայական մի քանի տերմիններ Գրիգոր Լուսավորչի Վարդապետության մեջ» (էջ 41—46) հոդվածում քննում է փիլիսոփայական մի քանի բառեր: Մասնագետները շատ քիչ ուշադրություն են դարձրել Ազաթանգեղոսի Պատմության վերջում գետնադրված այդ վարդապետությանը, մինչդեռ այն կարևոր է, որովհետև շարադրվել է նախքան հին հայերենում փիլիսոփայական տերմինների կայունացումը աստվածաբանական բանավեճերում:

Դրևի Գիյոմի «Հայոց եկեղեցին և XVI դարի բողոքական աստվածաբանները» ընդարձակ հոդվածը (էջ 253—297) նվիրված է հայ և բողոքական եկեղեցիների հարաբերությունների պատմությանը: Հոդվածագիրը լատիններեն բնագրով և ֆրանսերեն թարգմանությամբ մեջ է բերում անտիպ կամ տպագիր, սակայն թանգարանային դարձած փաստաթղթերը, որոնք իրենց բովանդակությամբ շատ կարևոր են ոչ միայն հայ եկեղեցու պատմության, այլև նշված ժամանակների հայկական կենցաղի ուսումնասիրության համար:

Արվեստագետներին և գիտական լայն շրջաններին հայտնի են Սիրարփի Տեր-Ներսիսյանի ուսումնասիրությունները հայ մանրանկարչության և արծաթագործության բնագավառում: Հանդեսի այս հատորում (էջ 121—147) նա, առաջինը լինելով, գեղարվեստական մանրակրկիտ ուսումնասիրության է ենթարկել Սկևռայի մասնատուփը, որն այժմ պահվում է Լոմփտաժի թանգարանում: Այդ առիթով շնորհալի արվեստագի-

տը ընդգրկել է նաև XIII—XIV դդ. Կիլիկիայի ոսկերչական արվեստի քննությունը: Ներդիր տրված են մասնատուփի լուսանկարները և հանգավորված ութոտանի 140 տող արձանագրությունները, որոնք կհետաքրքրեն անշուշտ լեզվաբաններին, քանի որ դրանք կրող իրը պատրաստվել է 1293 թ. Սկևռայում:

Հայ մանրանկարչական արվեստի, հատկապես Երևանի Մատենադարանի № 2877 հայերեն ձեռագրի մանրանկարների ուսումնասիրություն է Տ. Ա. Իզմաիլովայի ծավալուն հոդվածը (էջ 149—187), որին կցված են լուսանկարներ: Բուն մանրանկարների ուսումնասիրությանը նախորդում է ձեռագրի պատմությունը ըստ նրա հիշատակարանների:

Հայագետները թեև ցուցակագրել և նկարագրել են աշխարհով մեկ ցրված հայերեն շատ ձեռագրեր, սակայն այս բնագավառում դեռ շատ բան կա անելու, մանավանդ ցուցակագրողների նախնական տվյալները լրացնելու տեսակետից: Ուստի և շատ սգտակար աշխատանք է կատարել բելգիացի հայագետ Ժ. Մյուիլդերմանը (Լուվեն քաղաքից), լրացնելով Փարիզի ազգ. դրաղարանի «Parisien arménien 110» հայերեն ձեռագրի նկարագրությունը, որ իր ժամանակին կատարել է Յ. Մակլերը: Հոդվածագիրը վերականգնում է ձեռագրի կազմության ժամանակ տեղափոխված որոշ թվով թերթերի հերթականությունը և հիշատակում քսանի չափ բնագրերի առկայությունը այդ ձեռագրում, որոնք անտեսված են Մակլերի ցուցակում: Բացի այդ, նա հրատարակում և թարգմանում է ձեռագրի երկու անտիպ բնագիր, որոնք իրավամբ նրան արժեքավոր են թվացել: Առաջինը մի հատված է Եվսերևոսի Եկեղեցական պատմությունից (Հանդես, էջ 115—116), որ պակասում է այս երկի ձեռագրերում: Երկրորդը մի հատված է Եպիփանոսի Նորին յԱկանց վրոցից (էջ 117—118): Այս երկի հունարեն բնագիրը գրեթե ամբողջությամբ կորած է: 1934 թ. Ռ. Պ. Բլեյբլը Լոնդոնում հրատարակեց դրա վրացերեն թարգմանությունը և հայերեն, դատիերեն ու հունարեն մի շարք հատվածներ, որոնց մեջ չկա այստեղ հրատարակված էջը: Մյուիլդերմանը հայերեն ձեռագրերի վերաբերյալ հոդվածներ հրատարակել էր Հայագիտական Հանդեսի դեռևս առաջին շարքում 1929—1933 թթ.:

Երկու հոդվածագիր՝ Հ. Պերպերյանը և Պոլ Լըմերլը անդրադառնում են հայ հին գրականության ականավոր դեմքերից մեկի՝ Անանիա Շիրակացու ինքնակենսագրությանը: Առաջինը Շիրակացու կյանքի և երկու ինքնակենսագրությունների մասին որոշ տեղեկություններից հետո ֆրանսերեն թարգմանությամբ ներկայացնում է 1944 թ. Ա. Արրահամյանի հրատարա-

կած Ինքնակենսագրության ընդարձակ տարրերակր, անհրաժեշտության դեպքում ընդգրկելով նաև Ղ. Ալիշանի հրատարակած բնագրի տարրնթերցումները: Երկրորդ հոգվածագրի կարծիքով միջոց է, որ ընդարձակ տարրերակր նախընտրելի է համառոտ կոչվողից, և նա ցանկություն է հայտնում, որ այս կարևոր փաստաթուղթը արժանանա քննական հրատարակության: Նա ցույց է տալիս, որ Շիրակացու Ինքնակենսագրության մեջ եղած պատմական աղբյուրիկ տվյալներն արժանի են ուսումնասիրության. դրանք կարող են օգնել որոշելու, թե երբ է ապրել և դասավանդել Լևոնալիայի ուսուցիչ Տյուրիկոսը, Նետեաբար և նրա հայ աշակերտի կենսագրական տվյալները: Հոգվածագիրը կատարում է այդ ուսումնասիրությունը: Ձեռք բերված արդյունքների քննարկումը թողնում ենք հին գրականության մասնագետներին:

Քրդագետ Մ. Մոքրին «Հանդես»-ում տպագրել է «Հայաստանը քրդական բանահյուսության մեջ» (էջ 347—376) հոդվածը: Նա նկատի ունի իրանական Քուրդիստանի հարավային մասը, որը թեև շատ հեռու է Հայաստանի սահմաններից, սակայն իր բանավոր ասքերում պահել է Հայաստանին վերաբերող հնատիպ հենք, որին պատվաստվել են նորագույն տարրեր: Բանահյուսական և ազգագրական բազմաթիվ տրվյալները Մ. Մոքրին քաղում է դուրանի լեզվով գրի առնված իր իսկ հայտնաբերած ձեռագրից, որ նա հրատարակում է 1945 թ. սկսած: Հոգվածում նա վերլուծում է Բիժան-ու Մանիջա, Շիրին-ս Խոսրով, Շիրին-ու Ֆարհադ և ուրիշ բանավոր ավանդությունների քրդական տարբերակները և ցույց տալիս նրանց մեջ առկա հայկական գծերը: Հոգվածի վերջում կարդում ենք. «Շատ ուրիշ տվյալներ ցույց են տալիս այն տեղը, որ վերապահված է Հայաստանին Քուրդիստանի հարավային մասի բանահյուսության մեջ, և մնում են իհարկե դեռևս չօգտագործված նյութեր»:

Շատ շնորհակալ աշխատանք են կատարում այն պատմաբանները, որոնք կորստից փրկում են հայ գաղթականության պատմությունը, մանավանդ այնպիսի երկրների, ուր հայերն ապաստանել են միջնադարում և այժմ պրեքե ամբողջությամբ ձուլված են տեղի բնակչությանը: Ես ման աշխատանք էր կատարում հանգուցյալ ուսմիհնացի հայագետ Վ. Բրնրցյանուն: Նույն արցի ուսումնասիրության արդյունք է Կազիմիիր Ռոշկոյի (Լեհաստան) «Կուտիի հայերը» հոդվածը (էջ 377—387): Ռուսաստանում, Հունգարիայում, Լեհաստանում հայերի հաստատման ժամանակի վերաբերյալ արված ենթադրությունները հիշատակելուց հետո հեղինակը հետաքրքիրական տվյալներ է հաղորդում այժմ սովետա-

կան քաղաք դարձած Կուտիի հայերի քանակի մասին տարբեր ժամանակներում, նրանց արհեստների, նիստ ու կացի և սովորույթների, հարսանեկան արարողության, ազգանունների և մականունների, լեզվի ու կրթական աշխատանքի մասին:

Յա. Դաշկևիչի (Լվով) «Հայագիտությունը Ուկրաինայում XIX և XX դարերում» հոդվածը հանրագումարի է բերում այս երկրում կատարված հայագիտական աշխատանքը: Հավելվածում Շ. Մերսիեի թարգմանությամբ տրված է Իոան Լազիչիի «Հայոց կրոնի մասին» հատվածը:

Հայ դրամագիտությամբ զբաղվողներին կհետաքրքրի անշուշտ Ջ. Պ. Պտուկյանի (Նյու-Յորք) հրատարակած մատենագիտական ցանկը՝ «Հրատարակություններ հայ դրամագիտության վերաբերյալ, 1925—1963 թթ.»։ Հրատարակություններին կցված են նրանց բովանդակությունը նշող փոքր ծանոթություններ:

Հանդեսի այս հատորում գրախոսված են հետևյալ աշխատանքները.

Յուլիուս Ասֆալզ և Յոզեֆ Մուլիտոր, Հայկական ձեռագրեր (Գերմանիա) — Հ. Ներսես Ակինյան, Ցուցակ հայերեն ձեռագրաց ի Լվով և ի Ստանիսլավով — Ս. Կ. Նարինյան, Բուսաբանության մի արժեքավոր ձեռագիր Մատենադարանում — Կ. Ռոշկո, Հայերեն և վրացերեն ձեռագրերի ցուցակ — Հ. Մանանդյան, Մար-Աբասի «Հայաստանի սկզբնական պատմությունը» (Սեբեոսի, Մովսես Խորենացու և Պրոկոպիոս Կեսարացու սկզբնաղբյուրների հարցի մասին) — Ջ. Պտուկյան, Կիլիկյան Հայաստանի դրամահատությունը — Հ. Մ. Բարթիկյան, Պավլիկյան շարժման պատմության ուսումնասիրության աղբյուրները — Հ. Մ. Բարթիկյան, Գրիգոր Մագիստրոս Պահլավունու պատասխան թուղթը ասորական կաթողիկոսին — Հերոնիմոս Լիոնացի, Առաքելական քարոզչության ապացուցումը, Ֆրանսերեն թարգմանություն և ծանոթագրություններ Լ. Ֆրուադրվոյի — Վ. Ա. Պարսամյան, Լեհահայերի մասնակցությունը Դավիթ-Բեկի ապստամբությանը — Գ. Պետրովիչ, Լեհահայերի միացումը Սուրբ աթոռին — Յ. Մ. Բունիաթով, Ալբանիայի Վիրո կաթողիկոսի գործունեության մասին — Յա. Դաշկևիչ, Ուկրաինայի հայ գաղթիները XV—XIX դդ. աղբյուրներում և ուսումնասիրություններում:

Լրատու բաժնում համառոտ նկարագրված են Մեսրոպ Մաշտոցի ծննդյան 1600-ամյակի, հայ տպագրության 450-րդ տարեդարձի և Սայաթ-Նուվայի ծննդյան 250-րդ տարեդարձի հոբելյանները Երևանում, ինչպես նաև ուկրաինացի և հայ ժողովուրդների պատմական կապերին նվիրված գիտական երկրորդ նստաշրջանը, որ 1962 թ. նոյեմբերի 23—27-ին կայացավ Կիև և Լվով

քաղաքներում: Համառոտ տեղեկություններ են տրված Գ. Կյուլպենկյան հաստատության հայկական մատենաշարի մասին, որի հրատարակած հայագիտական գրքերի ցանկը տրված է հատորի շապիկի վրա, ինչպես նաև Երևանի Մատենադարանում պատրաստվող հայերեն ձեռագրերի ցուցակի մասին:

Ողջունելի է, որ սովետահայ հայագետներին ուսումնասիրությունները հրատարակելու և գրախոսելու ընտրության հարցում Հանդեսի խմբագրությունը իր ուղղորդությունը կենտրոնացրել է մեր երիտասարդ գիտնականների վրա: Սակայն հուսով եմք, որ իր հաջորդ հատորներում Հանդեսը գիտական աշխարհին հայտնի կդարձնի հայագիտության շենքի հիմնաքարերն ու սյուները հանդիսացող մեր տիտանների, ինչպես օրինակ՝ Մ. Արեղյանի, Ստ. Մալխասյանի, Ա. Տերտերյանի, Հ. Աճառյանի, Գ. Ղափանցյանի, Թ. Թորամանյանի և շատ ու շատ ուրիշների գրականագիտական, պատմա-բանասիրական, հայերենագիտական, ճարտարապետական և այլ տեսություններն ու աշխատությունները, ինչպես

նաև ժամանակակից մեր հայտնի հայագետների հետազոտությունները: Հատկապես ցանկալի է, որ եվրոպացի գրականագետները ծանոթանան Մ. Արեղյանի հետևյալ աշխատություններին՝ Վերածնունդը հայոց հին գրականության մեջ՝ Կյանքի և աշխարհայեցողության փոփոխությունը X դ. վերջերում և XI դ. սկզբներում իրրև հիմք հայոց հին գրականության վերածնունդի շրջանի, Հովհաննես Սարկավազ վարդապետ, Գրիգոր Նարեկացի, Հայ ժողովրդական վեպը և այլն: Մեյնն իր պարտականությունն էր համարում եվրոպական գիտական մամուլում տեղեկացնել իր աշակերտ Հ. Աճառյանի հետազոտությունները և ըստ այնմ էլ նրա աշխատությունների մասին հրատարակել է երկու տասնյակի շափ գրախոսություններ: Մեյնի մահվանից հետո լույս տեսան Հ. Աճառյանի Հայոց անձնանունների բառարանը, Հայոց լեզվի պատմությունը, Հայոց լեզվի լիակատար քերականությունը, Հայագիտական հանդեսը պետք է անդրադառնա այս աշխատություններին:

Մ. ՄԻՆԱՍՅԱՆ

УРАРТСКАЯ КЛИНООБРАЗНАЯ НАДПИСЬ ИЗ ГАРНИ

1. Находка урартской надписи в Гарни

Раскопки древнеармянской крепости Гарни с их блестящими результатами приобрели широкую известность, но сюрпризы ожидают археологов иногда даже в самых популярных пунктах работы. Можно было полагать, что название Гарни с характерным для урартской топонимики окончанием -ni восходит к урартским временам, но находка урартской надписи в этой крепости была приятной неожиданностью для археологической экспедиции.

На средневековых памятниках Гарни сохранилось множество весьма содержательных армянских надписей. Наиболее ранняя из них датирована 879 годом и показывает, что царство армянских Багратидов возникло значительно раньше его официального признания арабским халифатом и Византией в 885—886 гг. В Гарни обнаружены и греческие надписи I и III веков. Одна из них высечена на камне и рассказывает о строительстве крепости царем Тиридатом, другие оставлены на мозаичном полу бани.

В 1961 г. недалеко от бани с мозаичным полом была найдена также арамейская надпись, оставленная в начале III века сыном и преемником Вагаршака, царя Великой Армении. Клинообразная надпись, найденная в 1963 г., оставлена урартским царем Аргишти, сыном Менуа, в первой половине VIII в. до н. э.

Четыре вида письменности, обнаруженные в Гарни, характерны для всей Армении и знаменуют основные этапы применения письма ее аборигенным населением, а также переходы страны от одной цивилизации к другой.

Урартская надпись была найдена при особых обстоятельствах, заметно повышающих ее значение. Во время раскопок дворцового зала в крепости Гарни, расположенного к западу от языческого храма, были обнаружены базальтовые плиты из-под пилонов зала. На месте оказались три плиты почти квадратной формы. Четвертая плита толще других, имеет продолговатую форму